

Կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարում առողջապահության ազգային ինստիտուտի իրականացրած աշխատանքները

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային
ինստիտուտը» (ԱԱԻ) մարտի 18-ից իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք միտված
են եղել աջակցելու կորոնավիրուսային համավարակի հակազդմանը:

1. ԴԱՍՐՆԹԱՑՆԵՐ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

COVID-ի 19-ի վերաբերյալ բժիշկների, բուժքույրերի և մայրապետերի, վարչական
անձնակազմի հմտությունների և գիտելիքները բարելավելու նպատակով ԱԱԻ կողմից
կազմակերպվել են հետևյալ դասընթացները՝

1. Նոր կորոնավիրուս. հիմնական տեղեկատվություն բժիշկների համար

Դասընթացի նպատակն էր բժիշկներին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ և
հմտություններ, որոնք առավել դյուրին կդարձնեին COVID-19-ի տարբերակումը,
ախտորոշումը և բուժումը: Դասընթացի շրջանակում ներկայացվել են COVID-19-ի
պատճառագիտություն, համաճարակաբանություն, ախտորոշում, բուժում թեմաները:
Դասընթացին մասնակցել է շուրջ 970 մասնակից:

2. «Նոր կորոնավիրուսի կանխարգելում և վերահսկողություն» դասընթաց

Կորոնավիրուսի կանխարգելմանն ու վերահսկողությանն ուղղված դասընթացի հիմնական
նպատակն էր բարելավել բուժաշխատողների գիտելիքները և հմտությունները COVID-19-ի
վերաբերյալ: Դասընթացի շրջանակում ներկայացվել են հիվանդների մեկուսացում,
անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործում, ձեռքերի հիգիենա, ախտահանում,
բժշկական թափոնների կառավարում թեմաները: Դասընթացին մասնակցել է շուրջ 2700
բուժաշխատող:

3. «Նոր կորոնավիրուսային վարակի նմուշառման տեխնիկա» դասընթաց

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (ՀՎԿԿ) հետ
համատեղ իրականացվել են բժշկական տարբեր հաստատությունների բուժաշխատողների
համար նոր կորոնավիրուսային վարակի նմուշառմանն ուղղված դասընթացներ: Դասընթացը
նախատեսված էր այն բուժաշխատողների (բժիշկների և բուժքույրերի) համար, ովքեր
իրականացնելու էին նոր կորոնավիրուսի վարակի նմուշառում: Դասընթացները

իրականացվել են ԱԱԻ-ում, մարզային բուժհաստատություններում և ՀՎԿԱԿ մարզային ստորաբաժանումներում: Դասընթացին մասնակցել է շուրջ 290 բուժաշխատող:

4. Նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ դասընթացներ պոլիկլինիկաների, բուժական ամբուլատորիաների և առողջության կենտրոնների համար

Մայիսի 19-ից ԱԱԻ-ը կազմակերպել է հետևյալ խորացված դասընթացները պոլիկլինիկաների, գյուղական ամբուլատորիաների, առողջության կենտրոնների համար, որոնք վարում են Կովիդ դրական պացիենտներին.

4.1. Դասընթացներ Երևանի և մարզային բուժհաստատությունների վարչական անձնակազմի համար. նախատեսված էր վարչական անձնակազմին ներկայացնել Կովիդ-դրական պացիենտների տնային պայմաններում վարման ուղեցույցը և ընթացակարգերը: Դասընթացին մասնակցել է շուրջ 360 մասնակից:

4.2. Դասընթացներ Երևանի և մարզային բուժհաստատությունների բուժանձնակազմի համար. բաղկացած է եղել երկու մասից և նախատեսված պոլիկլինիկաների թերապևտների, ընտանեկան բժիշկների և մանկաբույժների համար: Մաս 1-ը նվիրված էր Կովիդ-դրական պացիենտների տնային պայմաններում վարման և բուժման ընթացակարգերին: Դասընթացին մասնակցել է ավելի քան 800 մասնակից: Մաս 2-ը նվիրված էր Կովիդ-դրական պացիենտների տնային պայմաններում վարման և բուժման ժամանակ բժիշկների շրջանում վարակի կանխարգելման և վերահսկողությանը: Դասընթացին մասնակցել է ավելի քան 800 մասնակից:

5. Նեղ մասնագիտական ուսումնական դասընթացներ

Մայիսի 22-ին մեկնարկել են նեղ մասնագիտական ուսումնական դասընթացները, որոնց շրջանակում տրամադրվել են գիտելիքներ այն մասնագետներին, ովքեր աշխատանքի էին անցնելու կորոնավիրուսային հիվանդության կասկածով և հաստատված պացիենտներին սպասարկում ապահովող բուժկենտրոններում: Նեղ մասնագիտական դասընթացներին մասնակցել է ավելի քան 70 մասնակից:

6. COVID-19-ի կանխարգելում և վերահսկում մանկապարտեզներում և մանկական կենտրոններում

Մանկապարտեզների և մանկական կենտրոնների անվտանգ աշխատանքի իրականացման նպատակով կազմակերպել են սեմինարներ, որոնց մասնակցել է ավելի քան 600 մասնակից:

2. ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՔԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔ՝ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայկական բժշկական միջազգային կոմիտեի և Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ փոխգործակցության շրջանակներում իրականացվել է նոր կորոնավիրուսային վարակի կանխարգելմանն ու բուժմանն ուղղված նեղ մասնագիտական առցանց քննարկումների շարք սփյուռքի ներկայացուցիչների հետ, որոնք միտված են եղել բարձրացնելու բուժաշխատողների մասնագիտական պատրաստվածություն և ներկայացնելու միջազգային փորձը: Դասընթացին մասնակցել է 2800-ից ավելի բուժաշխատող: Կազմակերպվել են հետևյալ թեմաներով քննարկումներ՝

- Կրիտիկական խնամքը նոր կորոնավիրուսային վարակի պայմաններում
- COVID-19-ը և վարակիչ հիվանդությունները
- COVID-19-ը և ռադիալոգիա
- COVID-19-ը և մանկաբարձություն
- COVID-19-ը և բուժքույրական խնամք
- COVID-19-ը և նմուշառում
- COVID-19-ը և մանկաբուժություն
- COVID-19-ը և արտակարգ իրավիճակներում բուժօգնությունը
- COVID-19-ը և սրտանոթային հիվանդությունները
- Բժշկական կրթությունը COVID-19-ը համավարակի ժամանակահատվածում (Medical education in Covid 19 era)
 - COVID-19-ը և անեսթեզալոգիա
 - COVID-19-ը և շաքարային դիաբետ
 - COVID-19-ը և նյարդաբանություն
 - COVID-19-ը և վերակենդանացման բաժանմունքում բուժքույրերի դերը
 - Ծերերի խնամք կորոնավիրուսային վարակի պայմաններում
 - Բուժքույրական խնամք՝ կորոնավիրուսային վարակի պայմաններում
 - Covid 19-ը և ՊՇՌ- թեստավորում
 - Covid 19-ը և շաքարային դիաբետով հիվանդ պացիենտների բուժքույրական խնամքը

- Covin 19 և սուր շնչական դիսթրես համախտանիշը
- Լիտվացի գործընկերների փորձի փոխանակում
- Ֆրանսիացի գործընկերների փորձի փոխանակում
- Թոքերի ճառագայթային ախտորոշում համակարգչային շերտագրման միջոցով

COVID-19-ի դեպքում

- Թոքաբորբի բուժումը կորոնավիրուսային վարակ (Covid-19) ունեցող և չունեցող պացիենտների համար

- Ուլտրաձայնային հետազոտությունը և կորոնավիրուսային վարակը COVID-19- ի հետևանքները սրտանոթային համակարգի վրա և բուժքույրական խնամքը

- COVID-19 հիվանդների համար բուժքույրերի գնահատում՝
- Կրծքավանդակի CT սկանավորում ` COVID-19- ով հիվանդների դեպքում

3. ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎԵՔԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նպատակ ունենալով ներկայացնելու նեղ մասնագիտությունների և նոր կորոնավիրուսային վարակի կապը՝ կազմակերպվել են նաև մի շարք վեբինարներ ազգային փորձագետների հետ: Դասընթացին մասնակցել է շուրջ 1700 մասնակից: Կազմակերպվել են հետևյալ թեմաներով վեբինարներ՝

- COVID-19-ը և շաքարային դիաբետ
- COVID-19-ը և մանկաբուժական խնամք
- COVID-19-ը և ակնաբուժություն
- COVID-19-ը և սնուցում
- COVID-19-ը և մանկաբարձություն և նեոնատոլոգիա
- COVID-19-ը և ռևմատոլոգիա
- COVID-19-ը և կավասակի հիվանդությունը
- COVID-19-ը և երեխաները
- COVID-19-ը և պալիատիվ խնամքը
- COVID-19-ը և մանկական խնամքը
- COVID-19-ը հիվանդության կանխարգելումը և վերահսկումը հիվանդանոցային պայմաններում

- COVID-19-ը և հոգեկան առողջություն

4. ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ԱԱԻ-ի աջակցությամբ ստեղծվել է բուժաշխատողների տեղեկատվական բազա, որոնց հիվան վրա ընտրվել են կամավորներ (ցանկում ընդգրկվել են նաև ԱԱԻ կլինիկական օրդինատորները): ԱԱԻ-ի կողմից իրականացվել և համակարգվել է ընտրված կամավորների կցումը՝ կորոնավիրուսային հիվանդության կասկածով և հաստատված պացիենտներին սպասարկում ապահովող բուժկենտրոններին:

5. ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՑԻԼԱՎՈՐՈՒՄ

ԱԱԻ-ն իրականացրել է ՀՀ ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալի վերապրոցիլավորում, որտեղ բուժում են ստանում կորոնավիրուսային վարակ ունեցող անձինք: Մինչույն ժամանակ ԱԱԻ-ը պատասխանատվություն է ստանձնել համակարգելու մեկուսացված կոնտակտավորների հետ տարվող աշխատանքները (Մինհոտել և Ավիատրանս հյուրանոցներում):

6. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ

ԱԱԻ կողմից մշակվել է նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ տեղեկատվական հարթակ, որը հասանելի է հետևյալ հղումով <http://nih.am/am/home/corona>: Հարթակում տեղակայված են ՀՀ նախարարի հրամաններ, ԱՀԿ-ի հանձնարարականներ նոր կորոնավիրուսային ինֆեկցիայի (COVID-19) տարածման կապակցությամբ, տեսադասընթացներ, իրազեկման տեսահոլովակներ, պաստառների օրինակներ, այլ նյութեր:

7. ԻՐԱԶԵԿՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Նոր կորոնավիրուսային վարակի դեմ արդյունավետ պայքար մղելու համար ԱԱԻ-ի կողմից մշակվել են իրազեկման պաստառներ և տեսահոլովակներ:

1. Պաստառների անհրաժեշտության նպատակն էր բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը:

2. Նյութերը պատկերավոր, հասկանալի լեզվով ներկայացնում են անվտանգության կանոնները տարբեր իրավիճակներում: Մասնավորապես մշակվել են հետևյալ պաստառները՝

- Իմ ձեռքերի հիգենայի 5 պահերի կանոնները հիվանդասենյակում հիվանդի հետ աշխատելուց

- Ախտահանեք ձեռքերը
- Ձեռքերի ախտահանման կանոնները ալկոգելով և լվացվելու ժամանակ նախատեսված հիվանդանոցների և պոլիկլինիկաների համար

- Ձեռքերի ախտահանման կանոնները ալկոգելով և լվացվելու ժամանակ՝ նախատեսված սննդի կետերի և հիվանդանոցների համար

- Ձեռնոցների կիրառման պիրամիդա
- Անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման կանոնները՝ արտահագուստ հագնել և հանել

- Սոցիալական հեռավորություն
- Աշխատանքի կազմակերպումը արտադրամասերում

3. Հանրային իրազեկման բարձրացման նպատակով մշակվել է **9 տեսահոլովակ**, որոնցում մանրամասն ներկայացվում են տարբեր իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանությունը: Տեսահոլովակների թեմաների ամբողջական կազմը ներկայացված են ստորև՝

- Մեծածախ և մանրածախ առևտրի կենտրոններում անվտանգության կանոններ
- Ուղևորատար տրանսպորտային միջոցների աշխատանքի կազմակերպման անվտանգության կանոններ

- Հանրային սննդի օբյեկտներում անվտանգության կանոններ
- Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայությունների կազմակերպման անվտանգության կանոններ

- Նոր կորոնավիրուսի կանխարգելման նպատակով ախտահանիչ միջոցներ
- Շինարարական հրապարակներում աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոններ

- Գրասենյակային աշխատանքի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխազեղմանն ուղղված անվտանգության կանոններ

- Հիվանդանոցային, առաջնային բժշկական օգնության և սպասարկման, շտապ բժշկական օգնության ծառայություններում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխազեղմանն ուղղված անվտանգության կանոններ

- Փակ արտադրական տարածքում տնտեսական գործունեություն ծավալելու ընթացքում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխագելմանն ուղղված անվտանգության կանոններ:

ԱԱԻ-ի կողմից թարգմանվել և տեղայնացվել են մի շարք տեսանյութեր ուղղված բուժանձնակազմի իրազեկման մակարդակի բարձրացմանը: Ինչպես նաև պատրաստվել են տեսադասընթացներ նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ: Տեղեկատվական նյութերը հասանելի են կորոնավիրուսային հիվանդության վերաբերյալ տեղեկատվական հարթակում <http://nih.am/am/home/corona>:

8.ՌԻՆԵՑՈՒՅՑԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Թարգմանվել է Հարվարդի երկրորդ խոշոր կլինիկական հիվանդանոցի՝ Brigham and Womens' Hospital (BWH)-ի ուղեցույցը՝ 21 բաժիններով, որոնցում ներառված են ինչպես նոր կորոնավիրուսային հիվանդության կլինիկական ընթացքի, ախտորոշման և բուժման վերաբերյալ տեղեկատվություն, այնպես էլ նեղ մասնագիտական ոլորտներից տվյալներ:

<http://covidprotocols.am/>

9.ՏԵՂԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԱԻ-ը և Բժշկական կամավոր միություն ընդդեմ COVID-19-ի փոխգործակացության շրջանակներում ստեղծվել է բուժաշխատողների համար հարթակ, որտեղ ներկայացված են COVID-19-ի վերաբերյալ միջազգային ուղեցույցները (հայերեն թարգմանությամբ):